

«Արդյունաբերություն» վիճակագրական ժողովածուի մեջ լուսաբանված են արդյունաբերության գործունեությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշները, ինչպես ըստ տնտեսական գործունեության տեսակների (ՏԳ-ՏԳ), այնպես էլ ճյուղային (ԺՏՃՀԳ) դասակարգիչների, սկսած 1998թ., իսկ առանձին դեպքերում՝ 1995թ.: Տվյալները բերված են ըստ համապատասխան տարիների դինամիկ պատկերի և արտացոլում են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր և ըստ խոշոր ճյուղերի, ինչպես նաև ըստ գործունեության տեսակների ծավալը, արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրությունը, արտադրական հզորությունները, նյութատեխնիկական բազայի վիճակը և այլն:

Մեթոդաբանական պարզաբանումները ներկայացված են առանձին մասով:

***Պայմանական նշաններ***

- «-» երևույթը բացակայում է
- «...» վիճակագրական տվյալներ չկան
- «0.0» ցուցանիշը փոքր է չափման միավորից
- «ճ» տվյալները ճշգրտված են

Առանձին դեպքերում հանրագումարների աննշան տարբերությունը գումարելիների գումարից բացատրվում է տվյալների կլորացմամբ:

«Արդյունաբերություն» նախորդ ժողովածուն հրատարակվել է 1999թ., որի արտացոլումն ավարտվել է 1997թ. դինամիկ պատկերով: